

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ն. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Ե. ՀԱՀ.—Մ. Նալբանդեանցի «Աղջմի-
քի» կորած կտորը Ձեզանից ստացանք, երբ «Լու-
մայի» № 1 լոյս էր տեսել. Զեռեղում ենք այս
համարում: Հնորհակալութիւն Ձեր աշխատութեան
համար:

ՀԱԼԼԷ.—Ն. ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ. Գերմաներէն գիր-
քը ստացանք. Ստացանք նաև Բեօրնսօնից Ձեր Թարգ-
մանած «Ուժից վեր» դրաման. կսկսենք տպել առա-
ջիկայ համարից. Երկրորդ մասը կարծեմ որ չպիտի
կարողանանք տպել, բայց երկուսը միմեանցից ան-
կախ գրուածքներ են:

ԲԱԳՈՒ.—Մ. ԲԱՐԽ. «Հնոց և նորոցը» շարոււմ է միւս
համարի համար:

ԹԻՖԼԻՍ.—Յ. Ն. Ձեր յօդուածը չի տպուիլ, կարող էք
յետ ստանալ:

Կ. ՊՕԼԻՍ.—Մ. Ձեր ուղարկած նիւթերը ստացանք. յար-
մաբները կտպուին «Լումայում», պատմական մասե-
րը կգետեղուին «Դիւանններում»:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ Թարգմանական յօդուածներ և վե-
պեր ուղարկողներից շատերը դժգոհութիւն են յայտ-
նում, որ իրանց աշխատութիւնները չեն տպոււմ
«Լումայում». այդպիսիներին առաջարկում ենք, որ
Թարգմանելու համար ընտրեն աւելի հետաքրքրա-
կան նիւթեր, որովհետև մեզ ուղարկուածներից շա-
տերը չեն տպոււմ հէնց ձանձրալի բովանդակու-
թեան պատճառով:

ԻԳԴԻՐ. Գ. Տ.—Թ. «Երիտասարդի յիշատակարանից» յօ-
դուածը չի տպուիլ:

ՄՈՍԿՈՒԱ. Ղ. Գ.—«Փէրզէին ետեւը» պատկերը ստացանք:

ՆՐՆԻԱՆ. ԲԺ. Լ. Տ.—Ձեր «Մարիկը Մասիսի վերայ» և
«Ծիծեռնակաբերդ» յօդուածները կը տպուին առաջի-
կայում:

ԲԱԳՈՒ. Ե. ԹԱԴԻԱՆՈՍԵԱՆՑ, Ձեր ցանկութիւնը, ցաւօք սըր-
տի, անկարող եղանք կատարել:

Խմբագիր-Հրատարակիչ ԳԻՒՑ Ա., ԳԱՀ. Ա.ՂԱՆՆԵԱՆՑ.
